

ԽԱՐԵՐԱԿ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ԾԳՈՍԼՏՈՄԻ 27-ին. Թիֆլիս. №35.

ՆԻԵՐ ՆՐԱՆՑ, ՈՐՈՒՔ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄՏՆՈՒՄ



Կար ժամանակ (հիմա էլ այսպես է) երբ՝ տեղից վեր կացողը մեկնում էր արտասանման և մտնում էր գլխաւորապէս գերմանական համալսարաններից մինը: Հայ ռուսանոցներից շատերը այնչափ շատ էին պարագլու՜մ, որ համարեա թէ գառախօսութիւններին չէին յաճարում, (լեզուն չգիտեն) բայ՝ գրիպումս-ներ ստանում էին (և տակաւին ստանում են): Չար լեզուները ստում են, որ հայ ուսանողներ դիպլոմներ ստանում են 500—1000 մարկով—(որպէս օտարերկրացի):

Մի անգամ մի այդպիսի ուսանող բեկտօրին 1000 մարկ տալով, ստանում է ցանկացած դիպլոմը—այս բանը նոյն իսկ գարձացրել է արարատեան աշխարհի զաւակին և երբ նա՝ ուսանողը շնորհակալութիւն յայտնելիս բեկտօրին, ուզում էր հեռանալ—բեկտօրն էլ իր հերթին գովում էր հայ ուսանողի ձին—

«Ուսանողը՝ նարցնում է.—արդեօք այդ դիպլոմից մինն էլ չէր կարելի տայից ձիւ:»

ԱՐՏ.Շ.ԵՅԻՍՈՎԱ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

«ԽԱՔԱԲԱԼԱ» ՊԱՐԵՆ
Բ Ա Ք Ա Բ Ա Լ Ա

VI Տարի

ՄԱՔԱԲԱԼԱ

VI Տարի

Երզնիստիական-աստիրական պատկերագրող շաբաթամթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱՔ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլիփչ, անկեղծ և կեղծա-
չոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ բերք բոլոր բնագիտության համար

«ԽԱՔԱԲԱԼԱ» շաբաթին ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆեիդ ուզի:
Հասցէն՝ Тифлиς Музейный пер., редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան

Տարեկան 5 ռ.
Կէս տարին 3 »
Երեք ամիսը 1 » 50 կ.
Ամիսը — 50 »
Թիֆլիսում տարեկան 4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուր-
հանդակ» ամենօրեայ թերթը ուղար-
կում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին
75 % զեղջ:

Ձրի կարգացողներին պէտք է նկա-
րենք զլխիվայր:

«ԽԱՔԱԲԱԼԱ» ՕՐԱՅՈՑՅԸ

ԻՄ ԳՆՐԿԵՐԸ. ԻՄ ՅԱԻԵՐԸ

1911 09-ՈՍՏՈՍ 30 օր

27

Суббота ՀԱՐԱՔ Ծաղոտ
Հունիսի 14

28 (կիր.) Տօն արանց և կանանց միմեանց հայրոյրաց, որպէս հայ գրագէտք հայրոյն:

29 (բ. 2.) Յիշատակ սրբոյն առաքելի Լէօ-
նի, որ մի օր քեֆ արաւ և ամեն օր քնթէն դուս
եկաւ:

30 (գ. 2.) Անւանակոյրէթին անանուն
զրոյց հայոց, որք է մէջ գատարկութեան՝ ան-
ւանեցան զրոյք իսկ իժում գործոց ի մէջ ծակս
մկանց մասն:

31 (դ. 2.) Շարթէգարձ նահատակեալ և
կիսակենդան նկարչին մերոյ ազգի, Արշակայ
Ֆեղվաճեան, որ ի Ղարաբաղ՝ երկվարօք շրջա-
գայեալ, այժմ ոչ կարէ, ոչ նստիլ, ոչ պտուկիլ և
ոչ... կապիլ:

Սեպտ. 1 (ե. 2.) Յիշատակ ծուլութեան
նախկին տոմարագէտին՝ զտէր Փարեմուղի, որ
մտեալ ի խորխորայտ Բարեգործականի ընկ.
այժմ ոչ կարիք գտանել և չգիտեմք թէ՛ մնց
որամք:

2 (ուրբ.) Տօն Գուտեմբերգի, բայց ոչ մա-
մուլագիւտի՝ այլ՝ Գալուտի Գալուտեան:

Տոմարագէտ և օրացոյցագետ
Ա. Արքայի աւր-վարդագետ.

Նալաթ չար սատանին, նալաթ.—
Նալաթ պոչաւոր սուտ ասողին, նա-
լաթ:
Նալաթ ամենայն փաթեղակաւոր
խաբարներին ու բոլոր միր մինձ ու
պղտիկ չար փիլքներին՝ նալաթ...
Առուտեհան, վուր վիր իմ կինում,
Ղէր արեւը չծագած զիփ սուփ զբերի
զբած ճամփով իմ ման գալի. սատա-
նին օխտը Ղէր թքում իմ, հրաժարիմ-
քը խօ փափախս էլ գլխիս վրայ դրած.
տասնուչորս Ղէր թարս կաղնած, ա-
սում իմ ու ասում:
«Հրաժարիմք ի սատանայ է» վուր ա-
սում իմ, հրաժարիմք ի չար ու սուտ
փիլքերէ, սառ-սառ մարօժնեմէն, սաք-
տաք բաղնիսեմէն՝ էն էլ իմ ասում:
Թէ վուր բան է, վատ բաներու
հուտ է գալի, էնէլ իմ ասում, հրա-
ժարիմք ի մերմէ կիրիմ էպիսկուպու-
զէ, վուր իրա պատիկ էլած-չէլած տի-
զովը հետտի զօջաղ բանիր է արի, վուր
էսօր աշխարքը վրէն արմտնում է:
էտ աղօթքները ասում իմ, էդ հրա-
ժարիմքը իրա կարք ու կանոնով, վունց
վուր էկազրէբա (հարկնէ) անում իմ,
ու էլի էլի, չար փաթեղակներէմէն
զլուխս չիմ կանացի պրծցնի էլի:
Ի՞նչ է, ի՞նչ իմ մեղք բան արի:
Գօթտուրին տեհայ, սսեց թէ՛ սեխ

չատ իս կերի, կօսէ, հիմի էլ խինա-
խինա խմէ, կօսէ:
Տուտուց է տուտուց, իս ու իմ հո-
բին. աբա մարթ սեխ ուտելուց էզը,
վուր խինախինա խմէ, էդ խօ Ղիս
կու չարաբաղդի դառնայ:
Գնացի էլի իմ ճանաչ, մօլլի մօտ:
Վաղուցայ մարթ է. հետտի մինձ
մինձ գրքեր ու կարաբաղինէք ունէ
կողքին դրած, վուր քու հաւնածը:
Ասի. հրաժարիմք ասում իմ, առու-
տեհան գողէնքիցը վուր վիր իմ կի-
նում. Ղէր աջ վուտիս վրայ իմ կաղ-
նում ասի, երեսիս խաչ իմ հանում,
մինչկի չայ խսելս աթաղան-բաբաղան
օրէնքով գրած զակուսկին էլ անում
իմ ասի. ու էլի ասի. խիլթի վրէն տ-
սի, մի քիչ զինջ չիմ ասի. էս ինչո՞ւ
միզէզով պիտի ըլի ասի:
— Բամիներու դօրութիւնիցը ու ինս
Ղինսի խասիապիցը. խօսէց մօլլէն:
Աբա, աբա հիմի ինչիր ին մօղա
նընդի. տեհնում իք:
Հէյ գիգի հա վուխտ:
Աղաք ո՞վ իր լսի էս հանգի հիւան-
դութիւններ:
— Ներէքը, կօսէ, աշլա գաշլա ին
էլի, փիլքերդ, կօսէ, վունց վուր գրժ-
ւած ծով վիրիւ ներքիւ ին անում, կօ-
սէ, ու վունց վուր լօբին թրթռալիս է
ըլում պրնձումը, կօսէ, էնէնց է էլի:

ԱՄԵՐԱՆՈՑԻ ՎԵՐՁ

(2000 ՄԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԿՈՐԵ)

Առաջին մաս

ՓՈԹՈՐԻԿ ԵՒ ԿԱՅԾԱԿ

Նա դուրս եկաւ պարկ, զբօսնելու այն ժամանակ, երբ ամպերը գոռացին և կայծակը սկսեց որոտալ: Նա վազեց կառքի յետևից, որպէսզի փոթորկի չհասնէր: Բայց նրան շանթահարեցին ամառանոցի օրիորդները կայծականման հայեացքները, որոնք նստած էին պատշգամբներում, լուռ երազանքների մէջ:

Խեղճը յանկարծ մի կողմ վայր ընկաւ: Անձրեւը կտրեց և «նա» էլ գնաց: Երագող օրիորդը չվախենալով փոթորկից, երկար ժամանակ դիտելով նրան, վերջը շշուշոյով շաց:

—Այս պարոնը իմ նախասահմանեալ ամուսինն է, ես նրան տեսել եմ իմ հոգու հայելում:

Երկրորդ մաս

Ս Պ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Մէկ օր, ըստ սովորութեան, ամառանոցի բնակիչը զբօսնելիս, պատահեց խառնութեան, որը յայտնեց, թէ ինքը այլևս ապառիկ ոչինչ չի տայ իր խանութից:

Ի՞նչ պէտք էր անել: Վերադառնալ իր բնակարանը—սովոր ըլլալը չարժէք... Յանկարծ նրա ախանջն ընկաւ պատշգամբից «սպանեց» խօսքը:

Այնտեղ երեք հոգի խօսում էին, ինչ որ կնոջ սպանութեան մասին: Սովեալ պարոնը թախանձագին ձայնով դիմեց նրանց.

—Ինձ էլ վերցրեք ձեզ հետ, պարոններ, թող չորս հոգի լինենք, ես ձեզ չեմ մասնի:

—Մեծաւ ուրախութեամբ, պատասխանեցին նրանք:

Երրորդ մաս

Ա.Ա.ՉԱԿՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Բանից երեաց, որ այն երեք հոգի—խօսողները աւազակներ են եղած, որոնք նրատացրին մեր հերոսին մեծ սեղանի շուրջը: Յանկարծ պատշգամբ դուրս եկաւ այն գեղեցկուհին, որը իբրև սպանւած էր և որը հրաշքով կենդանութիւն էր ստացել:

Յրանք երկուսը փոխանակեցին իրար այրող հայեացքներ:

Օգտուելով յարմար բոպէից պարոնը շշուշոյով շաց:

—Եղէք իմա:
—Օ, դուք իմ ազատիչ, շնջաց օրիորդը: Մինչ այդ, այդ պարոնները օգտուելով յարմար առիթից ներկայացրին նրա վճարելիք հաշիւը:

Պարզեց, որ հրաւիրւածը պէտք է վճարեր 4 ր. 75 կ.: Նա դիմեց տանտիրոջը:
—Մնդրեմ, ինձ փոխ տւէք դարձեալ 20

Ղուրթ վուր սա էլ պակաս խիլունքը չէ էլէլ:

Իս առուտեհները գողէնքից վեր կինալիս փիքը իմ անուժ ջէր աչ վուտը դնիմ գիդնին թէ ձախ:

Գանա հաուց ասկը իմ դարդը կուխմանայ:

Գանա հաուց ասկը արժանի է էդ սրտացաւութենի, վուր իս անուժ իմ, համա ինչ. ինչ անիմ ախպէր խիստ իմ սիրում ու:

Մարթ կայ խոտ է սիրում, մարթ կայ մարթ է սիրում, մարթ կայ մէ բան է սիրում: մարթ էլ կայ վուչինչ չէ սիրում, էն օրը մէ մարթու ոաստ է կայ—իս կուտ աղով ձմեռուկ շատ իմ սիրում, կուտ, ան աղ՝ շաքարն չիմ կանայ ուտի, կուտ, շայում մինչկի աղ չածիմ՝ չիմ կանայ խմի, կուտ:

Մնչ:

Այ էս թաւուր բանիք էլ է ըլում:

Խաթաբալա ամենայն հաուց
Գասպար աղա Կախաուզով



Մ Օ Ր Ս

Կարօտ սըրտով քեզ մօտ կըգայ
Հոգիս թոռած, թև առած,
Երազումս քեզ կըտեսնեմ
Ու լաց կըլեմ կարօտած...

Ես պանդուխտ եմ, դարիք տեղում,
Քեզ կըյիշեմ, մայրի՛կ ջան.—
Վառւած սըրտիս խոցոտ խորքում
Քեզ տեղ կըտամ, հոգի՛ ջան:

* * *

Կանաչ կարմիր փունջ կապեցի,
Որ իմ սիրած եարին տամ.
Բայց նա անզգութ, ձեռքէս չառաւ
Եւ թողեց ինձ բախտս լամ:

Ցաւող սըրտիս մի նոր վէրք էլ
Դըրեց անխիղճ էն աղջիկ,
Տանջանքների բեռը սըրտիս,
Ես սըզում եմ լուռ, մեղմի՛կ...

Նարգիզ



կուտ, ու կաթղկոսական խնդիրքներն էլ խօ ու փրօ շատ տակն ու վրայ ին սրի բերնիդ համը, կուտ:

—Հնա, ասի, իշտան չունիմ ասի, օրէնը հիմի իրիք չուրս ջէր ձիւ իմ ուտում ասի. ու կէրածն էլ ինչ է ասի. մէ իրիք չուրս շամփուր խորոված բազրիջնով ու պամիդորով, մէ լաւ արտալա դօշ, գուրգիէլ, խիար թթու դրած ու թագա, պանիր, սոխ, համիրմեղէն՝ պիտնա, քոնդար, ըէհան, պրասա, խաղող, դեղձ, ձմեռուկ, սեխ ու դուրծմա. մէ-մէ ջէր էլ մածոն ու փըլաւ. ասի:

—Էտէնց էլ պտի ըլի, կուտ, չունքի կարաբաղինում գրած է, կուտ, վուր ո՞վ ասկի համա շատ է փիքը անում, կուտ, բերնի համը խառնում է ու իշտան էլ փչանում է, կուտ:

—Բաս հրաժարիմք վուր ասում իմ ասի. էդ բանը չպտի օտկի ասի:

—Չէ, կուտ, ասկի գուրծների մէջ հրաժարիմքը չէ օտկում, կուտ:

—Բաս ինչ պտի ըլի ասի, գլխիս չարէս:

—Վախելու բան չկայ, կուտ, պտիս ամէն Աստու օր գնաս մէյդան՝ Հաւաբրի մէկ կամուրջով անցնիս մէկէլ կամուրջով էլի յեդ դառնաս, կուտ, էս պտիս անի քառսուն օր ու ամէ օր մէ մէ ջէր պտիս աւելցնիս ասմէ, շուր գալդ—մինչկի վրայ քառսուներորդ օրը քառսուն ջէր պտիս պտուտ գայ, կուտ, Կաթղկոսա...

—Ի՞նչ... ասի, կաթղկոսական խունգիրքը էտի ինչ բան ունէ ասի:

—Վունց թէ ինչ բան: կուտ, կաթղկոսական խունգիրի մինձ փայլ էստի կու վերջացնիս, կուտ, թէ վուր տեհնիս վուր լաւ լաւ փիքերը չին գալիս. դիվիր նընդի Քուրը—Չուրը, մէ սհաթում վերջ կուլի, կուտ:

—Աֆարէ՛մ ասի, իստակ վուր խիլօնք փիքը է:


Մնչ:

—Բաս չէ վուր միր տէրտէրները կանան փքրի վրան ման գայ. բան չալի՛նս, էն օրը մէ տէրտէրի ոաստ էկայ—խէլիմ խօսեցինք ասկի ցաւերից:

—Վայ դարդիս՝ թէ կաթղկոս չինք ունենայ, կուտ, իմ տէնտէրակինս սաղ ըլի, լօտօ, թուղթ ու դումար անպակաս ունենամ—այ թէ ինչ է ուզում ասկը—վուրս, կուտ:



Տրան տան տի տա լան լան լան լան
Տրի, Լի, Լի, Լի, Լի,
Այս գինով ձեր կերպացը կենի...



—Սերունդս հի շնորհում սիրելի աղքատացիներս... բայց, պէտք է կանչել վեզիկրին, տեղեկություն հարցնել, որքանօք էլի կան, մասցե՞ն են սիրելի աղքատացիներս կենարտի...



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ը, 25 կ. և ձեզ պարտք կըլինեմ ուղիղ 25 բուրլի ևս հէնց հիմա ստաշարկութիւն արի ձեր աղջկան...

Նա, ուրախութիւնից գրկեց անծանօթին և կամացուկ նրա ձեռքը զրեց պահանջած գումարը:

Չորրորդ մաս

Ո Ւ Ր Ի Ա Կ Ա Ն

--Դէհ հիմա քաղաք պէտք է ուղևորել. ժամանակն է, շնչաց անծանօթը, փողերը գրպանը դնելով, որ վերադառնալով իր բակարանը սկսել էր իրերը դարսել սնդուկներում:

Ամառանացաւորը քնած էր: Ամին կողմ մութ էր. բայց ինչպէս պէտք էր անցնել խանութպանի, ամառանոցի տիրոջ և ուրիշ պարտատէրերի կողմով:

Նրա գլխի մէջ ծագեց մի միտք. նա վերցրեց սաւանը, պցեց իրեն վրայ և աներկիւղ կերպով անցաւ պահապանների մօտով, որոնք «ուրևական» բացականչելով այս ու այն կողմ թափեցին:

Վտանգը անցած էր և Վէպը—այսպէս էին անւանում ամառանոցի հերոսին,— անյայտացաւ խաւար գիշերի մէջ:

Նա է:

ՔԻՉՄԻՉ-ԼԱՅԼԱՅՈՒ

ԿԱՄ

ՄՆՈՂՆԵՐԻ ՄԵՂՔԸ

Արտաշէսն իր ընկերների հետ սովորութիւն ունէր նշանակած ժամանակից միերկու ժամ առաջ գնալ Շնաշէնի ակումբը: Դիտմամբ թէ պատահմամբ նոյն տեղն էին գալիս և մի քանի մատող օրիորդներ գործից փախչելով: Ու այսպէս դաս-դաս, առջևից էզերը, հտեից արւացողները շրջում էին, ուշադիր միմեանց շարժումներին:

—Ինչ լաւ քիշմիշ օրիորդներ են, ասաց մի օր Արտաշէսը իր ընկերներին, օրիորդների մասին խօսելով:

—Թէ մենք քիշմիշ ենք դուք էլ լարլարու էք, յետ նայելով վրայ պրծաւ Աշխէսը կարմրած, ջգրած, ձեռքը եռանդագին գէպի արուններն ուղղելով:

Բաղդի յիմար խաղով այնպէս պատահեց, որ մի օր Արտաշէսը Աշխէնի ամուսինը դարձաւ:

Թէպէտ նրանք իրանց առաջին պաւակի անունը Արմենակ զրին սակայն, թաղը, այնուամենայնիւ հարկաւոր գտաւ Արմենակին մականւանել Քիշմիշ-Լաբլաբու...

Արա որդիները Քիշմիշ-Լաբլաբուի որդիներ մականւանեցին...

Այդ անունն անցաւ թոռան թոռներին, ծոններին...

Ու այս բոլորը շնորհիւ Արտաշէսի և Աշխէնի շարութեան, որ նրանք թոյլ տւին Շնաշէնի ակումբի այգում...

Կիրակի օրը թէ Չուբալովի և թէ Հաւլարարի թատրոններում ներկայացումներ կային. ես երկու տեղն էլ ազգասիրտքար մուտքի իրաւունք ունէի:

«Մուքթա կուբօն» բոքիկ սաքով վազ տալու հայկական սուրբ և աւանդական սովորութիւնը չխախտելու համար, ուզեցի երկուսիցն էլ օգտել՝ եղբորս կամ քաջալ Բէգօին ուղարկել Չուբալովի թատրոն, որ չյաջողեց. իսկ ինքս գնացի Հաւլարարի թատրոն գլխաւորապէս պ. Նոնիկեանին տեսնելու բեմի վրայ, որին լրագրներում, չնայած այս ամառուայ շոգերին, սկսեցին անբաստանել այնպէս, ինչպէս որ սրբազան Օրմանեանը անբաստանում է կաթողիկոսական ընտրութեան ժամանակ:

Այդ օրը խաղում էին Սոււբատովի «Դաւաճանութիւն» ողբերգ. 5 գործող.

Սուլէյման խանի գերը կատարում էր պ. Նոնիկեան, որ Ի-ին գործողութեան մէջ բաւարար էր, իսկ վերջին գործողութեան ժամանակ նա լաւ տարաւ իր դերը, մանաւանդ երբ իմանում է Ձէյնարի դաւաճանութիւնը:

Սակայն մուլէյման-բէգի ծօծօլա կամիլաւան, զանգակի տեղ ժանդոսած վեղբօի չրիկոցը և նրա խայտաբղէտ ցեց ընկած միբուքի դաւաճանութիւնը Ձէյնարի և Օթար-բէգի դաւաճանութիւնից էլ անցաւ: Խեղճ Նոնիկեանի ձեռքին կարծես գումիարարիկ կամ շրէշ լինէր քսած, հէնց որ ձեռքը տանում էր օծեալ միբուքին, անիրաւը դաստով պոկում էր և կախ ընկնում:

Ի նկատի ունենալով այդ բոլորը, ես 1. պ. Նոնիկեանին կըզնեմ 4—, 2. տիկ. Նիւուէլին—Ձէյնար 4 և խաչ, 3. Յ. Բազդասարեանին—Օթարբէգ 4, 4. տիկ. Մանուշարեանին—Գայիանէ 3— (—ը դնում եմ նրա անընական ծիծաղի համար), 5. օր. Արշալոյսին—Ռուքայիա 3 և կէս (կէսը ի հաշիւ յանպատրաստից դուրս գալու), 6. պ. պ. Անտոնեանին—Անանիա, Շէկօյեանին—Էրէկէլ 6 և կէս (թող իրանք հալալ բաժին անեն), 7. պ. Աղամջանեանին—Բէսօ 3 և կէս (գինին կոնծելու համար 3 և խաչ, խաղի համար 3 և կէս, իսկ խաչը յօգուտ «որբոց և այրիեաց» Հաւլարարու), 8. Մնացածներին 2—3, 9. Հանդիսականներին 2 (կարգապահութեան համար), 10. կոնտրօլներին 1 և կէս (լաւ կօնտրօլի բաւարտ անելու համար) 11. Փաբեմուզին 2 և կէս (թագա մօզնի բեցենզիայի համար):

Այս թւանշանները իրաքանչիւր սիրող թող նշանակի իր ցուցատետրի մէջ, որպէսզի հինգ անգամ 4 ստացողը փոխադրել դերասանական աստիճանին այնպէս, ինչպէս որ մկրատարան Բախշի Իշխանեանին տրեց փիլիսոփայութեան դօքտորի աստիճան:

Փաբեմուզ

Երեկ տեղիս ակումբում դաշա եկող հայ մայրերը ժողով էին գումարել, որ մշակեն, իրենց գործունէութեան ծրագիրն, ստենք՝ Խնչպէս աղջիկներին ամուսնացնեն:

Շատ խօսեցին, վիճեցին և վերջը եկան այն եզրակացութեան որ ոչ մի ելք չկայ, ամեն ինչ արել էին, օրինակ, էլ դեղատներում ներկեր չեն թողել, էլ սափրիչները մօտ մազ, ամեն օր կէս գիշերին անտառներում հրաւերք էին սարքել, ամբողջ սեզոնում մօտ 15—20 նոր զգեստներ են կարել աւել, ոչինչ չէ դուրս եկել, ուստի որոշեցին իմ միջոցով գիմել. ամենայն հայոց գինեւրոյթաթարախատների աղա Գասպար Կալատուզովին: Հիմա դու Գասպար աղա, գիտենք ամեն հայ-բրիտանացի դարզն ու ցան դարմանում ես, կըխնդրէի որ մեր խեղճ, բերախտ մայրերի աղերսագին խնդրը կատարես ու խորհուրդ տաս, ինչպէս անեն, որ յաջողի աղջիկներին հէնց այստեղ ամուսնացնեն: Եթէ կարելի է շուտ պատասխանէք, որովհետեւ սեզոնի վերջը գալիս է, մինչև Երևան էրթալները վերջացնեն, թէ չէ սիրուն, սիրուն, նախշուն հարուստ տղերքը կըփախչեն, մեր աղջկերքը չմնան:

Ես էլ եմ խնդրում իմ կողմից, որ նրանց մուրազը տաս քո խորհուրդներով, թէ չէ մեղկ են, մայրերից օրը մէկը ուշաթափում է, էլ Դարաչիչազում սպիրտ չմնաց, վալերեան, էլ ձով է իմանում ինչ դարդուբալա է:


Դեկեզատ բերախտ մայրերի կողմից Գասպար աղա Կալատուզովին՝

Փիղօ

Պատասխան.

Իս կնիկ ունիմ թէ չէ կու փսակէի. այ թէ վուր Աստուծ աայ ու էշմիաճնումը էլի մէ Կենդրոնական ժողով մոգոնեցին, ու վճիռ աւելն թէ հայերը կանան շատ կնանիք ունենալ—իս էսօրէիթ խօսք իմ տալի վուր էգ աղջկեբանց հետ կու նշուիմ հէնց հիմիկս ևէթ—կուպսակելիմ էն չախը իփ վուր հրամանք կուլի. ու պրիդանը կի հիմի գուզիմ. սրա մէ աւել, Յիղօ ջան, վուչինչ չիմ կանայ անի. խօմ գիղէս իմ խասիաթը—էս էլ լաւ է վուր գաբէդաւ իմ անում, քու արևը գիղենայ:

Գաս. Կալատուզով



№ 96-ՈՒՄ

Յետևն այն ճոխ, սև շիրմայի
Դողում է լոյսը նւազ,
Այնտեղ շարժուն զոյգ սիրեաներ,
Նշմարում են հազիւ հազ.

Ահա նրանք հրևացին,
Աւելացաւ լոյսն էլ անհ.
Մինը՝ որսկան էլիչկան է,
Միւսը՝ մի ծեր քահանայ.

Մինը՝ փտած, դէմքը ծալուել,
Միւսը՝ նազիկ աղունակ,
Մինը՝ որպէս թոշ աւելուել,
Միւսը՝ վարդի հանգունակ.

Ծերի տկուր գլուխը հաստ
էլօն շոյում է, նազում,
Ծերը՝ նէրա շորին, փորին
Պաշ է տալիս ու հազում.

Աշխոյժ իրը ցայգաթիթեռ
էլօն խնդում է շոգմոզ,
Ծերը՝ լքում է յիշելով հեզ
Ջահիլութիւնն իր անհոգ.

Եւ էլօն իր մարմինը մեղկ
Նուրբ լոգիկում պարփակած,
Կենաց բոյրն է յուշում ծերին,
Որպէս անդրի մի ձուլած.

Շախ ու շուխով նրայ վրայ
Թափ է տալիս մատիկն իր,
Ու շշնջում—«էյ մուրացիկ,
Ե՛կ տօտիկս համբուրի...»

Ուշ գիշերին իր յանցաւոր
Սէրին տալով վերջակէտ,
Ծերը՝ խոով բնութիւնից,
Ուզեց մեկնել այնուհետ.

Կախեց լանջին շղթան... (?) անարգ,
Առաւ շապօն ու շեշտեց—
«Գիշեր բարձր...» բայց այդ պահուն
Դռան զանգը զօղանջեց.

«Միրականս է...»—ցնցւեց էլօն,
Ծեղճ ծերուկին սարսրեց,
Ու նրա գեր մարմինը շտապ
Օթոցի տակ թագցրեց:

Եւ մինչ կուղղէր վարսերի մէջ
Դրասանգները ալ ծաղկանց,
Տեսաւ իր գօշ ուսանողին
Դռների մէջ կիսաբաց...

Նրանք այնպէս պուշ ու անուշ
Համբուրեցին վեհափառ
Այնպէս տենդոտ ու աղուշիկ
էլօն ժպտաց տարփավառ...

Հեքը պահած ծերը շար,
Սարդի փոշոտ խոշորած
Ոստայններում, անշարժ ու խոնջ
Մնացել էր կուշ եկած.

Եւ էլօն սև շնիկն էլ
Չարածնին անիրաւ,
Այդ չար ժամին պոչը տնկած
Եկել հաշում էր վրան.

Մերթ բռնում էր նրա շորի
Փեշերիցը, քաշքում,

բուխի է նման և որ կարող է ոչնչացնել
միմիայն գերեզմանը.

Սաշան գեռ համալսարանը չաւարտած,
հրագում էր ամուսնանալ մի շատ հարուստ
օրիորդի հետ և որ այդ օրիորդը լինէր ան-
պատճառ միակ ժառանգ իր միլիոնատէր
ծնողների: Այս միտքը դառել էր նրա հա-
մար կեանքի գլխաւոր նպատակ:

Սաշան էլ իր քսան տարի բոլորելուց
յետոյ աշխատում էր գտնել այնպիսի փե-
սացու, որ լինի գեղեցիկ, առողջ, ուսում-
նական և իրանից քիչ մեծ, մօտաւորապէս
հրեք-չորս տարով:

Երկիրը օգնութեան հկաւ հրկուսին էլ:
Սաշան ու Մաշան իրար հանդիպեցին, ծա-
նօթացան, միմեանց հաւանեցին ու պսակ-
ւեցին: Մաշան Սաշայի երազածն էր, Մաշան
էլ Մաշայի: Երկուսն էլ իրանց մօրազին
հասան:

Երջանիկ զոյգը ապրում էր այնպէս, ինչ-
պէս կը վայելի «արիտոնկրատներին»: Նը-
րանց սէրը անսահման էր, նոյնն էր և նը-
րանց ազատութիւնը: Շատ յաճախ նրան-
ցից ամեն մէկը իր շրջանում ժամանակ էր
անցկացնում և ուշ գիշեր, երբեմն նոյն իսկ
լուսադէմին տուն վերադառնում: Եւ Սաշան
ու Մաշան իրար այնքան սիրում ու յար-
գում էին, որ երբեմն նրանց մէջ տեղի չէր

Մերթ նստում էր ու փայտաբեր
Նորից հաշում—խըլըռում...
Վա՛յ անաւօթ. վա՛յել է քեզ
Վարձկան կնկանն այցելել է.
Ա՛յ անպարկեշտ... գեթ իմացիր—
Կոչումիցդ պատկանել...

Vive la Femme.—շեշտեց գօշը,
Լիք բաժակը դատարկեց,
Ծերը մի քիչ առաջ սողաց
Ու իր որդուն ճանաչեց.

Եւ մինչև այսպէս փնթփնթում էր
Յանկարծ խոկաց, խրոխտ հա-
զաց,
Ու լուցին—շունն անաբեկ,
էլօն գունատ, գօշն ապշած:

Ու դուրս եկաւ հայրը լալով
Իր արխիվից մոռացւած,
Եւ ինքն իրեն թափ-թափ տալով
Դիմեց որդուն զայրացած.

—Ի՞նչ ես շինում այստեղ, տօ
փուշ...
==Իսկ դու հայր, ի՞նչ ես շինում.
—Ես եկել եմ քո հակից...
==Ես էլ քեզ եմ որոնում.

—Ես գործ ունիմ... ծխակոնս է...
Կարող եմ գալ անարգել...
==Մարմնամարդի վարժուհիս է,
Ես էլ դասի եմ եկել.

—Ա՛յ դու ПОДЛЕЦ, դուրս կորիր շուտ,
Թէ չէ ձեռնոց կընհետեմ...

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Ե Ր Չ Ա Ն Ի Կ Ջ Ո Յ Գ Ե Ր

—Հոգուդ մեռնիմ, Սաշա, արդեօք ի՞նչ-
պէս էի դիմանում, երբ դեռ քեզ չէի ճա-
նաչում: Կամ ի՞նչպէս պէտք է դիմանամ,
եթէ, Աստուած հետու պահէ, մի օր ճակա-
տագիրը ինձ քեզանից զրկի: Աճրողջ քա-
ղաքը նախանձում է մեզ: Մեր երջանիկ
կեանքը, մեր բախտաւորութիւնը խօսակ-
ցութեան առարկայ է բոլոր ընտանիքնե-
րում...

Այսպէս էր խօսում Չահլի կին Մաշան իր
սիրելի ամուսին Սաշայի հետ:

—Գիտե՞ս, հոգիս,—պատասխանեց մար-
դը,—բոլոր իմ ծանօթները, որոնք առաջ
հերքում էին ամուսնութիւնը, տեսնելով
մեր այսպիսի սիրաբորբոք կեանքը, վճռել
են անպատճառ պսակել: Չես հաւատ՞ում,
աղնիւ խօսք...

Ջրուցում էին այսպէս ամեն օր Սաշան
ու Մաշան, ժպտալով, ծիծաղելով ու գըր-
կախ առնելով: Երգում էին Աստուծոյ և բո-
լոր սուրբերի անունով միմեանց հաւատաց-
նելու համար, որ իրանց սէրը անշէջ հրա-

ունենում թիւրիմացութիւն կամ այս ու
այն ձևի անբաւականութիւն:

Կար մի ուրիշ երջանիկ զոյգ էլ, Կօլեա և
Յլիա անունով: Սրանք էլ նոր էին ամուս-
նացել, իսկ և իսկ առաջինների նման:
Սրանց գաղափարն ու նպատակն էլ, դրու-
թիւնն ու ապրելու ձևն էլ բոլորովին մի
և նոյնն էր: Այս երկու զոյգը իրար հետ
մտերմական յարաբերութեան մէջ լինելուց
զատ, այնքան նման էին միմեանց, նիստ
ու կացով ու սովորութիւններով, որ քա-
ղաքում սրանց անունը դրել էին «Երկու
Չուխտ շամայի»:

Յերեկայ ժամը մէկն էր: Սաշան ու Մա-
շան սովորութեան համեմատ նոր էին ան-
կողնից վեր կացել ու նստած թէյ էին
խմում ու սիրալիւր խօսակցում:

—Գիտե՞ս, Մաշա, ընկերներս համոզեցին
ինձ, որ այս գիշեր, թղթախաղը վերջացնե-
լուց յետոյ, «Կրուժօկից» ուղղակի դնալ
«Սպիտակ դուքան» քէֆի... մի ամիս է
չենք եղել... իսկ դու մըր կերթաս, հո-
գեակ:


Մաշան յոնքերը կիտեց և շրթունքները
ուռցրեց: Թէյի կիսատ բաժակը զրեց սե-
զանի վրայ ու շտապով անցաւ միւս սե-
նեակը: Սաշան իսկոյն հասկացաւ, որ կինը



POTTER.

(Օրթանալում երբ որ հաճապորդները կուռն էին՝ կինասն դրանց բաժանում է իրարուց հեռեկալը ասելով)

—Վա՛, ամօթ չէ՛, հէր օխնածներ, հայ մեղոն չի քսած ձեր նակտին, էտ ինչ անկազաթ ու ան... վա՛յ ձեր մարթ ասողին ի՛նչ ասիմ, վուր գեղինը չիք մտնու՛մ...



POTTER.

գրիպման առաջին բոսան, մինչ լալիս էր Լիգան— Մէնը դեռ էլ փող էր պահանջում իր խե քմահանձոյքների համար.

Նրանք «չէ», սա «հա»... բանը հասաւ գանակոծութեան և չուստակոծութեան, որից յետոյ Մէնը փախաւ «Շարիղուրութ» հիւրանոցը իր տունը շինող Тина Квало-ЛО-ի մօտ: Այդ գիշեր իր ստերով մի կերպ գիշերեց այդտեղ, իսկ հետեակ առաւօտը, երբ Тина-ն նրա գրպանի ցաւագին դատարկութեան մէջ համոզւեց, դուրս շարքտեց իր առանձնասենեակից ինչպէս մի փտած սերկեխ, ու շղայնացած հեկեկաց—
—Spectre infernal...!

Ծոծրակը քորելով, Մէնը վերստին տուն դարձաւ: Փէփէլը գնաց Տէր-Պիպոսի մօտ բողբոջու...

Սիստ տաղտկալի էր: Լիգան լուր ու մունջ ամբողջ օրը խոռով մնաց Մէնի հետ և միայն ուշ գիշերը՝ քաղցրը համբոյր ու յանցանքների ժամին հաշտեց իր նենգ սիրահարի հետ, և աւշային տենդից ինքն իրան շուրթերը կըրծելով ասաց—
—Փիս, համ գիփ կերար, համէլ... համէլ...

Վ

Քօսա-Արտէմի փողերից մի ծակ կոպէկ անգամ չմնաց իրբե տխուր յիշատակ վաղեմի փառք ու փայլի, խինդ ու խեղութեան...

Անտէր փողերը վերջացան: Շատ չանցած, Փէփէլը՝ գնաց Սոջիվանք հանգստանալու և շատ լաւ արաւ, որովհետեւ մի անգամ ընդմիջ ազատեց իր ինտիմ ցաւից: Մենաշէնը՝ ընկաւ աւտօմօբիլի տակ ու ի հարկէ յետևից իր մեծ մամիկին, երևի չուզելով ապագայում потёшная рота-յում հատ ականջը խաչանիշ օդով զարդարել: Մէնը՝ մեկնեց Վիբօրգ իր կեանքի վերջակէտը գտնելու և լրագիրներում ինքնասպանների քրօնիկայի մէջ տեղ գրաւելու, որովհետեւ էլ չէր կարողանում Փէփէլի և Լիգայի նման յիմարներ ձանկել ու սատակում էր քաղցից ու վշտից:

Իսկ Լիգան տակաւին երգելով իր արիաներն ու բօմանները, Սօնա բալլին ու Հօյ նազանըրը, ընկաւ հոգեկան հիւանդների ապաստարանը կերակրելով—

—Պիմ, պօմ, պօմ, պօմ...» Իբր թէ դաշնակ է նւագում: Միայն պորտաբոյծ Տէր-Պիպոսի գլուխը սաղ մնաց, որ յաջող քէֆի չաղ ժամերին յիշելով իր Փէփօյին, ասում էր.

—Վա ինքը անդէր, ակալիկը անդէր, փէմէն ու թոռը անդէր... փուղերն էլ անդէր, հալքաթ վուր վերջը էտէնց կէր... Հաջ տա տա տա... թէ մէ ասկականութին կէր մեր մէջը, իս գիղէի թէ վուց կու քարոզէի նրանց ու դուզ ձամփի կու կաղնացնէի...

Համա... անդէր փուղերը վուր կեր, վուչինչ չէր ըլի... մայինց, օղորմի իրանց...

Մարիկ

Տ Ո Ւ Ի Ի Ս Տ

Արագընթաց զնայքը ինձ տանում էր դէպի հարաւային Ռուսաստան:

Ես անցել էի օրդէն ճանապարհիս կէսը, մտածում էի, որ անմտութիւն է առիթից չօգտուել: Իմ ուշադրութիւնը գրաւեց մի մի գեղեցիկ շիկահեր օրիորդ: Ես կամացուկ շշնջացի՝

—Տիրուհի, ինչպիսի շքեղ տեսարաններ են փուած այս տեղերում:

Լուսթիւն: —Ներեցէք, գուցէ ձեզ տհաճ է իմ խօսակցութիւնը:

Ոչ մի պատասխան: Ես միայն ծիծաղեց: Ծածուկ նայում էր նա մերթ ինձ մերթ պատուհանին: Մտաւ կոնդուկտորը և խանգարեց մեր լուր խօսակցութիւնը: Միջանկեալ կերպով կոնդուկտորը ինձ հասկացրեց, որ օրիորդը հայերէն չէ խօսում:

Ես դժբախտաբար լաւ չգիտէի օտար լեզուներ:

Բաղդն շատ յաջող ելք ունեցաւ, մենք պատահաբար միեւնոյն հիւրանոցը իջանք, մեր սենեակները իրար կից էին:

Բուֆետում նախաճաշիւոց յետոյ, երբ ես վերադարձայ իմ համարը, պատահաբար ինձ գտայ շիկահեր օրիորդի սենեակում: Նա կիսահան պուկած էր մահճակալի վերայ, իմ երևան գալը նրան օտարօտի չըթւաց:

Ես ընկայ նրա ոտքերը և սկսեցի խօսել իմ բոլոր գիտցած լեզուներով:

—Ես ձեզ սիրում եմ, իմ հրեշտակա, ես պատրաստ եմ ամեն...

—Լաւ, շշնջաց օրիորդը, եթէ այդպէս է, փոխ տէք ինձ 500 բուրլի, ես ճանապարհածախք չունեմ:

Ինչքան մարդ անփորձ պիտի լինի, որ կարծի, թէ այդպիսի ժամանակ տղամարդու և այն էլ երիտասարդի գրպանում կարող է փող լինել:

—Դէ, ինչ էք անում, վճարեցէք:

—Ինձ մօտ այդքան փող չկայ, ասացի ես:

—Ի՞նչ, դուք փող չունէք և համարձակուիմ էք սիրել:

Օրիորդը հիմա միանգամայն կանոնաւոր սուսերէնով սկսեց խօսել, նրա ձեռքից վայր ընկաւ բրաունին:

—Ես կարող էի այստեղ մարդիկ հրաւիրել, բայց բուրթը ես կըզգզզեմ:

Եւ նա ուղղեց իմ վերայ ատրճանակը: Ինձ մնում էր միայն նրա իրանը գրկել պատշապանելու համար:

... Ես վայր ընկայ և այդպիսի զրուծեան մէջ ես երկար մնացի:

—Բայդ ուր է օտարուհին, շշնջացի ևս ուշքի գալով:

—Նա արդէն սեղանի է և ձեր անունով մի տոմս է թողել:

Ես նայեցի այդ «տոմսը» և կարգացի հայերէն միայն երկու տող «Հին վրիժառու» Հոգիդ կընանեմ—եթէ ուրիշ անգամ էլ կանանց նետ անփող ես պատահել:

Այդ օրւանից ես այլևս ոչորք հնար թէ կշատ էլ գեղեցիկներ լինեն, ես այլևս չեմ ոյ մասին դրանց պատճառով չեմ բացատրում. ես վախում եմ և ատրճանակից և մանաւանդ երկտողից.

«Հոգիդ կընանեմ եթէ անփող... Ախ այ անփող...»

Այս



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿՈՐՍԻՆԾ Ի յունիսի 19—20-ին
ՄԻ ՁԵՆԱԳԻՐ ԲՐՕՇԻՒՐ
Մ Ա Ր Ի Ա
«ՆԱՍԵԿՆԵՐ ԱՌ ԼԻՆՆ»
Գտնողին խնդրում են թողնել «Սաթարալա»-ի խմբագրատանը, գոհացուցիչ վարձատրութեամբ: 10—6

МАГАЗИНЪ
КОМПОЗИЦІЯ
Тифлисъ, Пушкинскіи пассаж№ 8
Громадная экономія
шведскаго композиціон. бѣлья
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ
По фабричнымъ цѣнамъ
Передѣлка въ любой фасонъ безплатно
Продаются портняжныя принадлежности, какъ-то пуговицы, подкладки, мѣль и прочѣе.
ИНФЕТТА ТУТЪ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЬ
Остерегайтесь поддѣлокъ и подражаній
Просимъ обратится только Пушкинскій пассажъ № 8.
15—1 (о. н.) М. А. КАЛТАКЯНЪ



Ի-Ն Խ Ո Ն Ա Ր Ա Բ Ա Կ Ա Ն
Կ Ո Ւ Բ Ս Ե Բ

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍ-
ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ՃԱՇԻ» ինքնու-
սուցման համար. մօտ 1000 ընդհանուր
կերակուրներ, խմիչքներ, թխածք-
ների, կօմպօտի, մուրաբանների քաղց-
րեղենների և կարկանդակների և այլն:
300 երես խիտ տպագրած, գինը ճա-
նապարհածախսով վերադիր վճարով 2ր
60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնա-
ւոր կերպով տանել տնային տնտեսու-
թիւնը և պատրաստել տնային համեղ
ու անդարար ճաշ, միւր կոտորելու և
սեղանը զարդարելու մասին յաւելա-
ծով, մօտ 100 երես, նկարներով: Գինը
1 ս. 20 կ., երկու գիրքը միասին 3
ս. 35 կ. (կարելի է մարկաններով).
պահանջներով գիմել բացառապէս Պ.
Բյրցսկ. րսյ, Ս.Պետերբուրգ, Պետեր-
Կ. Պետեստորոնա, Большой просп.
№ 56—609, 483 0—16
(Ե. հ. 2.)

40 օր! ՉԲԻ!

Եթէ դուք 40 օրայ ընթացքում չէք
սովորի ազատ խօսել, կարդալ և գրել
գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն
և լատիներէն նորագոյն մեթօդով կազ-
մած մեր ձեռնարկներով (ուրիշները
բեկլամ են),
ՓՈՂՂ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ
սոր ձեռնարկի գինը ճանապարհածախ-
սով վերագիր վճարով արժէ 1 ր. 10
պ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—
Մ 2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.:
Պատւէրները կատարում է միակ պա-
հեստը ամբողջ Ռուսաստանի համար:
Ս. Պետերբուրգ, Պետերբուրգսկ. սո-
րոնա Большой пр. № 56—609, Պ.
Կ. Պետերս. 482 00—16

ԲՈՂՈՐՈՎԻՆ

!! ՉԸԿԱՆ ԱՅԼԵՒՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!
Եթէ դուք հիւանդ էք սֆիլիսով, արի-
ստիկով, շանկերով, սեռական թուլու-
թեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայ-
քայլած է ծանականութեամբ—պա-
հանջեցէք «Հանրամատչելի բժշկարան
գաղտնի հիւանդութիւնների տղամար-
դու, կանանց միզասեռական օրգաննե-
րի», նկարներով և բազմաթիւ ըն-
դհանրներով մօտ 250 երես: Գինը ճա-
նապարհածախսով ու վերադիր վճարով
1 ր. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկա-
րան-ձեռնարկ», չափահասների և ամեն
տեսակ հիւանդութիւններ բժշկելու
համար, բացի գաղտնի հիւանդութիւն-
ներից, առանց բժշկի օգնութեան մօտ
400 երես. գինը ճանապարհած. վերա-
դիր վճարով 1 ր. 40 կոպ.: Երկու գիր-
քը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է
մարկաններով): Միակ պահեստը Ս.
Պետերբուրգ, Պետերբուրգ. ստորոնա,
Большой просп. № 56—609 Պ. Կ.
Պետերս 484 (Ե. հ. 2.) 0—16



Բ Է Ս Տ Ո Ր Ա Ն - Ճ Ա Շ Ա Ր Ա Ն
„ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ թամամշեան
քարվանսարայի տակ

ՄԻՅՏ ԹԱՐՍ ՄԹԵՐՔԻՅ

— Եւրոպական և ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Հնարը ըմպելիներ, զով կարենտ-սենեակներ մաքուր խո-
հանոց ու պատրաստակամ ծառաներ

25—18



Первокл. ресторакъ
„АННОНА“



„Здание Архитестического Общества“


Сод. Я. Т Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час.
пополудни и вечеромъ отъ 10 час.

до 2-хъ час. ночи. играетъ вновѣ приглаш. итальянскій струнный ор-
кестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць—г-жи Сакко и Марія Оландезе и
баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.


— ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2
час до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60,
трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская;
билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“


52—18



== Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է ==
Ն Ա Բ-Դ Ո Ս
Պ Ա Յ Բ Ա Ր
Վ Է Պ
Գիճճ է 75 կոպէկ
Գլխաւոր պահեստը «Գոլտտենբերգ» գրախա-
նութեամ, ուր և գիմում են գումարով գնողները:



Մէջիսը.—
Մահնէր Ակբ գտաւը 100,000 Թուլան. հիլ քիբի կըտանը:



Մահնէր Ակբի քանակը.—
Մէջիսականները գիլնեցը հարիսը հարգարական րուքիլ. հիլ քիբի կըտան:



Եւ գնում են քիբիլու...

